

ոստայնի տակ նստում են 2-4 հոգի եւ իրենց առջեւը դրած գորգի օրինակին նայելով ճշդութեամբ թեւերը անցնում»⁽⁵⁾ :

Գորգ գործելը արդի վկայութեամբ մասնաւորապէս հայ իրական սեռին բաժին կ'իյնայ, թէեւ մաքէ հանելու չէ որ հայ այր գորգագործն ալ մեծ բաժին ունի ատոր մէջ: Մեր ապրած դարուն գոնէ գորգի վերաբերող գործիքներու «գործածողը կ'ինն է, գանում են նրա իշխանութեան տակ, օր. տաշտ, մաղեր... եւն... գորգ կապերտ գործելու գործիքները, ինչպէս եւ գորգերը, կապերտները... բուրգը, թելը եւ ալն»⁽⁶⁾ :

ԳՈՐԳԵՐՈՒ ԼԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ՆԻԻԹԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Պատմական անտարակուսելի փաստեր ցոյց կու տան որ Հայաստանի մէջ բամբակի, կանեփի, մետաքսի, ոսկեթելի եւ արծաթ թելի գործածութիւնը ընդհանրացած էր հիւսուածեղէններու մէջ: Նոյնպէս տարակոյս չկայ որ այդ նիւթերը գործածուած են գորգագործութեան մէջ ալ: Նոյն ատեն ցաւալի է որ ցարգ մեղի չեն հասած հայկական գորգեր, որոնք բուրգէ տարբեր նիւթերով շինուած ըլլան: Միւս նիւթերու մասին մեր ծանօթութիւնները մատենագրական են, հայ եւ օտար աղբիւրներէ քաղուած:

Սա. Օրբէլեան կը վկայէ որ Ե դարուն Հայոց կաթողիկոսը «փառաւորութեամբ տարեալ իջուցանէին ի խորանն արքունական. եւ նըստուցանէին ի վերայ ոսկեթել եւ մարգարտաշար բազմականին, ի գահ իշխանացն»⁽⁷⁾: Ասիկա մեղի կը յիշեցնէ Հայոց դրացի Պարսից նշանաւոր Սոսորովի դարուն կոչուած ոսկեթել, արծաթթել, մետաքս, մարգարտաշար եւ գոհարներով ընդելուզեալ գորգը որ է դարուն սկիզբը կտոր կտոր փճացուեցաւ աւարառու արարներէ:

Օրբէլեանի յիշած ոսկեթել մարգարտաշար «բազմական»ին կամ գորգին նման գորգ մըն ալ կը յիշէ Սա. Տարօնեցի, ժ դարուն Անույ կաթողիկէին Հայոց կատրամիտէ թաղուհւոյն ըրած նուէրներուն կարգին. «եւ գարգարեաց ի կարգ ծիրանածաղիկ ոսկեթել, նկարագործ անկուածոց»: Ասիկա շատ ու շատ կը յիշեցնէ Վարդան վարդապետի այն վկայութիւնը, որուն համաձայն «Փատրուն առնու զԱնի յԱլփառանայ, տալով նմա ոսկեակուս նկարս ծաղկոցի»⁽⁸⁾: Առաքել Անեցիի ծանօթ ըլլալու էին այս մեծարժէք նիւթերով շինուած գոր-

⁽⁵⁾ Բուրգ գղելը եւ գորգ գործելը Ղարաբաղում: - Գրեց՝ Կ. Կ. Մեղիք-Շահնազարեանց: «Հանդ. Ամս.», 1928, էջ 77:

⁽⁶⁾ Հայ ժողովրդի արհեստագործութիւնը: - Գրեց՝ Ս. Թասալեան: Աղգ. Հանդ. 1898, թիւ 1. էջ 28-29:

⁽⁷⁾ Պատ. Նահանգին Սիսական, 1910, Թիֆլիս, էջ 74:

⁽⁸⁾ Ս. Ղազար, 1862, էջ 103: